

ԵՒՐՈՊԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՆԵՐ ԴԱՄԱՍԿՈՍԻ ՄԷՋ

Շարունակուած էջ 1-էն

իր կարգին շեշտեց, թէ իրենց Դամասկոս այցելութիւնը եւրո-միութենէն նշան է՝ Սուրիոյ հետ քաղաքական նոր յարա-բերութիւններ մշակելու առնչութեամբ: Նախարարները նախապէս այցելած էին Նաեւ Սեւեռայայի տիրաւորչակ բանտը եւ շեշտած իշխանափոխութիւնը հեզասահ ամբողջացնելու կարեւորութիւնը, առանց վտանգելու երկրին ապահովութիւնը ու ամբողջականութիւնը: Գերմանիա շեշտեց ապագայ Սուրիոյ կառուցումին մէջ յարանուանական փոքրամասնութիւններուն մասնակցութեան անհրաժեշտութիւնը: Իսկ «Ռոյթըրզ» լրատու գործակալութիւնը հաղորդեց, թէ Պերլինի իշխանութիւնները որոշած են նիւթական յաւելեալ յատկացում տրամադրել Գերմանիա ապաստանած սուրիացի այն տեղահանուած-ներուն, որոնք կ'որոշեն վերադառնալ իրենց հայրենիքը:

ԱՐՏԵՐԿՐԵԱՅ ԶՕՐԱԿՑՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԻՈՅ

Սուրիոյ անցումային արտաքին գործերու նախարար Ասատ Շիպանի յայտնեց, որ Սեւեռայայի Արաբիա պատ-րաստականութիւն յայտնած է մասնակցելու Սուրիոյ վերա-կանգնումին եւ անվտանգութեան պահպանումին: Նախարարը



նշեց, որ սեւեռայան կողմին հետ խորհրդակցութեան ընթացքին բացայայտած է տնտեսական բարգաւաճումի ծրագիր մշակելու եւ Սուրիոյ տարածաշրջանային քաղաքա-կան դերակատարութիւնը վերականգնելու վճարակաւորութիւնը, զօրակցելու տարածաշրջանի կայունութեան ու անվտանգու-թեան: Ռիատ, միւս կողմէ, զօրակցութիւն յայտնած է Սուրիոյ նոր իշխանութեան ու ժողովուրդին, աջակցելով երկրի խաղա-

ղութեան, կայունութեան եւ տարածքային ամբողջա-կանութեան: Իսկ ՄԱԿ-ի մէջ Ռուսիոյ ներկայացուցիչը իր կարգին յայտնեց, թէ Սուրիոյ նոր իշխանութենէն դրական նշաններ կը ստանան ռուս զինուորներու Սուրիոյ մէջ տեղա-կայունը շարունակելու վերաբերեալ:

ԽՈՒՃԱՊ ԵՄԵՆԻ ԶՐԹԻՈՒՆԵՐԵՆ

Եմենի մէջ իշխող հուսիններու Անսարալլա կազմակեր-պութեան բանբեր Եահիա Սարիի յայտնեց, որ հեռահար երկու հրթիռ արձակուած է Թեյ Ալիի շրջանին մէջ գտնուող երկու թիրախներու ուղղութեամբ: Իսրայէլեան լրատուամիջոցներ միւս կողմէ հաղորդեցին, թէ եմենեան հրթիռներուն պատճառով շուրջ հինգ միլիոն քաղաքացի խուճապահար դիմած է ապաս-տան: Իսկ իսրայէլեան իշխանութիւնները մշեցին, թէ հրթիռ-ները ինկած են բաց շրջաններու մէջ:



Համասի «Քասամ» զինեալ թելը մինչ այդ յայտարարեց, թէ Կազայի կեդրոնական հատուածին վերեւ հակաօդային պաշտ-պանութեան հրթիռ մը արձակած է իսրայէլեան ուղղաթիռի ուղղութեամբ, մինչ իսրայէլեան բանակը յստակացուց, թէ հրթիռը չէ վտանգած ուղղաթիռը:



«ԻՆՉՔԱՆ ՄԵԾ ԵՆ ԳՈՐԾԵՐԴ, ՏԷՐ...»

Շարունակուած էջ 1-էն

Այսօր Ս. Ծնունդ է: Հեռուէն հանդիսատես չըլլանք, այլ մօտեանք մեզի եկել մեր Փրկիչին, որպէսզի մեր կեանքը փոքրկող տեսակաւոր տազնապներուն դիմաց, նոր յոյս ու նոր շնորհք գտնելով, իրական բերկրանք ապրինք ու պայ-ծառանք:

Այս պահը ճաշ տեսակ մը պատասխանատուութիւն կը դնէ բոլորիս վրայ, որպէսզի մեր նախնիներուն հաւատքով բոլորովնք մեր եկեղեցիներէն ներս եւ օրհներգութիւն ձօնելով աշխարհ եկող մեր Փրկիչին, հաստատ հաւատքով հռչակենք, թէ, արդարեւ, Աստուած ոչ միայն մօտ է մեզի, այլեւ ներկայ մեր կեանքէն ներս:

Տօնական բարեբաստիկ առիթով, կ'աղօթենք, որ մեր ժողո-վորդի զաւակները Աստուծով պայքարին կեանքի ապա-կանութեան եւ շեղումներուն դէմ, Աստուծով պաշտպանուին, Աստուծով շինեն, շէնցեն ու վայելեն եւ Աստուծով ապրին, յուսան ու յաղթեն:

Թող երկնային օրհնութիւնը յորդ եւ գեղուն ըլլայ բոլորին վրայ եւ Աստուծոյ պահապան Աջը յաւետ պայծառ պահէ մեր եկեղեցին, մեր բոլոր կրթական, մշակութային, բարեսիրական կառոյցները, կազմակերպութիւններն ու մարմինները, անփոր-ծանք պահէ Լիբանանն ու մեր հայրենիքը եւ անվտանգ կեանք պարգեւէ աշխարհասփիռ մեր ժողովուրդին:

Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ: Չեզ եւ մեզ մեծ աւետիս:

ԽԱԶԲԱՌ-20

10x10 grid for crossword puzzle 20

ՀՈՐԻՋՈՆԱԿԱՆ

- 1) Եղջերուի տեսակ
2) Լեռկ, խոպան
3) Ոլոռ - 5600 - Ծայրաւ՝ կարծառ
4) Սարսափ - Ծուխ - Այրութենէն (հակ.)
5) Ցուցակ - Հոնմեական դիցաբանութեան մէջ՝ լուսնի եւ ամիսներու աստուածուհին
6) Գիշակեր թռչուն - Ակնկալութիւն
7) Արական օտար անուն - Թերի, պակասաւոր - Ածականակերտ մասնիկ
8) Բազրատունեաց մայրաքաղաքը - Կրկնուած բաղաձայններ - Սիւմանթոյի ծննդավայրը (հակ.)
9) Ասիական ոստան
10) Պայքար, մարտնչում

ՈՒՂԱԳԱՅԵԱՑ

- 1) Մտքի վերաբերող
2) Վիթարի, հսկայական
3) Կաթնէնէն պատրաստուած կերակուր - Պտուղի մը ծայրերը - Հասկցիր
4) Ժխտական մասնիկ - Դնդեր - Անճայր՝ սահմա-նային տուրք
5) Շրջ.՝ հնձուած ցորենի դէզ - Անհամար (հակ.)
6) Քիթէն կախուող կաթիլ - Լեւոն Ա. քազաւորի մայրը (հակ.)
7) Կրկնուած ձայնաւորներ - Պրպտում, որոնում - Մակաբոյժ միջատ
8) Սկաւուտ - Շաղկապ (հակ.) - Ձրային փոխադ-րամիջոց
9) Ոտքի կանգնիլ (հակ.)
10) Համահայկական հիմնադրամ

ՊԱՀՈՒԱԾ ԲԱՌ-21

10x10 grid for crossword puzzle 21

ՍԱՍՏ
ՍԱՍՏԻԿ
ՍԵՂԱՆ
ՍԵՂԱՆԱԿԻՑ
ՍԵՂԱՆԱԻՈՐ
ՍԵՂԱՐԱՐ
ՍՊԵՂԱՆԻ
ՍՐԱՏԵՍ

ՎԱԴԵՍԻ
ՎԱՃԱՌՔ
ՎԱՇՏ
ՎԱՍՏԱԿ
ՎԱՐԿ
ՎԱՐԿԱԾ
ՎԻՃԱԿ
ՎԻՃԱԿԱԿԻՑ
ՎՎԱՆԴԵԼ

ՏԱՂԱՆԴ
ՏԱՂԱՆԴԱԻՈՐ
ՏԱՏԱՍԿ
ՏԱՐԻՔ
ՏԵՍԱԿ
ՏԻԿՆԻԿ
ՏԻՐԱՆԱԼ

ԶԻՆՈՒՈՐ
ԶԻՐԿ
ԶՏԱՐԱՆ

ՈԱԶՄ
ՈԱԶՄԱՃԱԿԱՏ
ՈԱԶՄԵՐԳ
ՈԱԶՄԻԿ
ՈԱՄԻԿ
ՌԻՇՏ
ՌՆԳԵՂՁԻՐ

ՍԱՆԳԱՍՏԱԿ
ՍԱՌՆԱՐԱՆ

ԱԾԱՆՑ
ԱԿՆԱՐԿ
ԱԿՆՈՑ
ԱԴՑԱՆ
ԱՆԱԳԱՆ
ԱՆԱՐԻ
ԱՆՍԱՍՏ
ԱՍՊԵՏ
ԱՐԱՐԱԾ
ԱՔԼՈՐ
ԳԵՂԱԿԵՐՏ
ԳԵՂԱՆԻ
ԳԵՂԱՐԴ
ԳԵՂԱՆԴԻ
ԳՈՂԱՐ
ԳՈՂԱՐԱԿԱՃԱՌ
ԳՐԱԿԱԼ
ԳՐԱՍՏ
ԴԱՇՏ
ԴԱՇՏԱՆԿԱՐ
ԴԱՍՏԱԿ
ԴԱՍՏԱԿԵՐՏ
ԴԱՐԱԿ
ԴԱՐԱՊԱՆ
ԴԵՂԱՆԻ
ԴԵՂԱՐԱՐ

ԵՂԵՄ
ԵՂԱՆԱԿ
ԵՂՁԻՐ
ԵՈԱՆԴ
ԵՐԳԱՐԱՆ
ԵՐԴՈՒՄ
ԵՐԿԱՆ
ԵՐԿԻՆՔ
ԶԱՆԱԶԱՆ
ԶԱՐԳՈՒՆ
ԶԱԽԵՇՏ
ԶԳԱՍՏԱՆԱԼ
ԶԻՆԱՐԱՆ

ԽԱԴԻՆ ՕՐԵՆՔԸ.
- Բառերը կրնան կարդացուիլ տարբեր ուղղութեամբ՝ հորիզոնական, ուղղահայեաց եւ շեղակի:
- Միեւնոյն տառը կրնայ գործածուիլ մէկէ աւելի բառերու մէջ:
- Դիւրութեան համար սկսիլ երկար բառերը գտնելով:
Պահուած բառը (9 տառով)՝ ԲՈՒԺԱԿԱՆ ԲՈՅՍ

ՊԱՀՈՒԱԾ ԲԱՌ-ԹԻՒ 20-ԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ՝ ՅԱՏՈՅ

Պահուած բառին եւ խաչբառին պատասխանները տեսնել խաղերու յաջորդ թիւով

ԽԱԶԲԱՌ-ԹԻՒ 19-ԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ

10x10 grid for crossword puzzle 19

